372
U-36

№ 250

0120-10

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՅՈՑ

ԵԿԵՂԵՑ.-ԾԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

ԵՌԱՄԵԱՅ - 1905 - 1908 Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐԱՍՏՈՒԳՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆ։

Ադէրբայճանական
Տպարան Ա. Մ. Մաղխասեանցի
1909

372
Ա-36

Арм.
3-2715а
372
Ա-36
3-2715а
գրգ.

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՅՈՑ

ԵԿԵՂԵՑ.-ԾԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

ԵՌԱՄԵԱՅ - 1905 – 1908 Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ
ՎԵՐԱՍՏՈՒԳՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Инв. № 21195

Ա դ է ք ա ա ն գ ր ա պ ո ւ
Տպարան Ա. Մ. Մաշխասեանցի
1909

4 FEB 2013
50.276
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մ. Ա. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
40782-63

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՅՈՑ

Եկեղ.-Ծխակ. հոգաբարձութեան եռամեայ՝ 1905 —1908 թ. գործունեութիւնը վերաստուգող յանձնաժողովի զեկուցումն:

Ախալքալաքի Հայոց Եկեղեց.-Ծխական ընդհանուր ժողովի յանձնարարութեամբ, նոյն ծխական ժողովում ընտրուած վերաստուգիչ յանձնաժողովս, գաւառս Հայր Գործակալի 5-ն յունվարի տարեւոյս ընդ № 7 զրութեան համաձայն, սոյն 1909 թ. յունվարի 13-ից մինչ այսօր 17-ն յուլիսի 1909 թ. մի շարք պարբերական ժողովներում ըստ կարելւոյն փաստացի քննութեան ենթարկելով տեղոյս եկեղեց.-ծխական հոգաբարձութեան 1905—6, 1906—7, և 1907—8 ուս. տար. եռամեայ գործունէութիւնն, եկաւ հետեւեալ եզրակացութեան:

Ա. ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ. 1) Եկեղ.-ծխական կանոնագրութեան §§ 67 և 72-ի համաձայն եկեղ.-ծխական հոգաբարձութիւնը պարտաւոր է ամեն տարի հաշիւ տալ ծխական ժողովին և այդ ժողովի ընտրած վերաստուգիչ յանձնաժողովին, որի քննութիւնից յետոյ պէտք է տպագրուած հաշիւները բաժանուեն բոլոր ծխականներին: Մինչդեռ ինչպէս երևաց Հոգաբարձ. խորհրդի արձանագրութիւններից, ել և մեր հաշուեմատեաններից, գաւառս Հ. Գործակալի № 398 զրութիւնից և յանձնաժողովիս քննութիւնից, Ախալքալաքի Հայոց եկեղ.-ծխական հոգաբարձութիւնն իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում (1905—1908 թ.) և ոչ մի անգամ հաշիւ

չէ տուել ոչ ծխական ժողովին և ոչ այդ ժողովից ընտրված որևէ յանձնաժողովի։

Հակառակ դէպքում հաշվեմատեանում պիտի արձանագրված լինեիր հաշիւները քննող մարմնի եզրակացութիւնը, կամ կազմված լինեիր առանձին արձանագրութիւն այդ առթիւ, որպիսին չէ եղեր երբէք և չկայ։

Մանաւ. Վերաստուգիչ յանձնաժողովիս անդամներից պ. պ. Վ. Քաջազնունին և Ա. Ղազանչեան յայտնեցին, որ 1905—6 ուս տարւայ վերջերը ժողովրդից մի խումբ բազմութիւն նախկին Հոգաբարձութիւնից քանիցս պահանջեց հաշիւ։ Հոգաբարձութիւնն երկու շաբաթից աւել ձգձգելուց յետոյ, դպրոցի դահլիճում, ուր հաւաքված էին մի խումբ ժողովուրդ, գանձապահը դրեց սեղանի վրայ մի որ մատեաններ, բայց ոչ ոք չը քննեց և չը նայեց այդ մատեանները։

Յանձնաժողովս լսելով վերոգրեալն՝ եկաւ այն եզրակացութեան, որ չը նայելով ժողովրդի բուռն պահանջին, հոգաբարձութիւնն այնուամենայնիւ հաշիւ չէ տուել օրինական կարգով կանոնաւոր ծխական ժողովում, չը կայ այդ մասին ոչ մի արձանագրութիւն, հետևապէս և յիշեալ մասնաւոր դէպքը չի կարելի համարել հաշվետուութիւն։

2) Նախկին Հոգաբարձութեան եռամեայ հաշվեմատեանների տակ ստորագրել է միայն գանձապահ Վարդան Շահպարոնեան, չկան միւս հոգաբարձուների արձանագրութիւնները. (միայն 1905—6 ուս. տարւայ ել և մտից հաշվեմատեանների տակ յանձնաժողովիս նիստի ժամանակ, առանց հաշիւների քննելու, ստորագրեց նախկին հոգաբ. Յ. Մեծատուեան), որից երևում է, որ հոգաբարձութիւնն իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում, երբէք չէ քննել ու ստուգել իր գանձապահի հաշիւները, ինչպէս պարզ երևում է այդ և հոգաբ. խորհրդի արձանագրութիւններից։ Այսպէս 1906 թ. հոկտ. 6-ին հոգաբ. խորհուրդն ուղեցել է ստուգել գանձապահի հաշիւները, բայց «ժամանակը ուշ լինելու պատճառով ժողովը յետաձգեց հաշվետուութիւնը» (1906 թ. հոկտ. 6-ի արձանագր.) և այնուհետև չկայ այդ մասին և ոչ մի յիշատակութիւն։

Մանաւ. Նոյն բանն հաստատում է և նախկին հոգաբարձու պ. Վ. Կարապետեան իր յունվարի 23 թուակիր յանձնաժողովիս գրութեամբ, ուր ասում է՝ «իմ չբստորագրելս տպագրած հաշվի տակ այն պատճառաւ է, որ հաշիւների ուղղութիւնն ինձ անյայտ էր և առանց անձամբ ստուգելու չէի կարող ստորագրել։»

3) Եկեղ.-ծխական կանոնադրութեան § 72 համաձայն եկեղեցական երեսմից նոր խոհարարն ամեն տարի պիտի քննէ ու հաստատէ ծխական ընդհանուր ժողովը։ Մինչդեռ նախկին հոգաբարձութիւնն իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում և ոչ մի տարի չէ ներկայացրել նախահաշիւ ծխական ժողովին հաստատութիւն և 21041 բուր. 65 կոպ. հասարակական մի խոշոր գումար ստացել ու ծախսել է ըստ իր հայեցողութեան։

Մանաւ. 1906—7 ուս. տարւայ համար չկայ նոյն իսկ հոգաբ կազմած նախահաշիւ և գանձապահն 6043 բուր, 8 կ. ծախսել է ինքնագլուխ, 122 բուր 87 կ. պարտք թողնելով դպրոցների վրայ.

Բ. ՀԱՇՎԵՄԱՏԵԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. 1) Իւրաքանչիւր հասարակական հիմնարկութեան ել և մուտքն արձանագրւում է ժապաւինեալ մատեանում, կնքված պաշտաօնական կնքով։ Մինչդեռ նախկին հոգաբարձութեան մատեաններից (բացի 1905—6 ուս. տարւայ ելևմտից մատեանը) և ոչ մէկը չէ ժապաւինած և կնքած նոյն իսկ դպրոցական կամ հոգաբարձական կնքով։

2) Հաշվեմատեանները կազմված են շատ անփոյթ ու անինամ։ Այսպէս շատ տեղեր ջնջած ու փոփոխած են նախկին գրածները, որոնց ճշտութիւնն ստուգելու ոչ մի հնարաւորութիւն չունի յանձնաժողովս։ Օրինակ «կրպակների հաշվեմատեանի 27

թերթի երկրորդ երեսում գրած է՝ «№ 17, 18 և 19 կրպակները քրէհով են տրուած Յարութիւն Դիլանեանցին երեք տարի ժամանակով, սկսած 15-ն յուլիսի 1905 թիւ մինչ 1-ն յուլիսի 1908 թիւ», և ապա «երեք տարի-ն» ջնջած դարձրած է «չորս», «15-ն յուլիսի» դարձրած է «1-ն». «1908 թիւը» ջնջած փոխած է «1909 թ»։ Այդպիսի ջնջումներ կան նոյն մատեանի 1 թերթի 2 երեսում, 5 թերթի երկրորդ երեսում, 19 թերթի երկրորդ երեսում, 21 թերթի երկրորդ երեսում և այլն։ 1905—6 ուս. տարեայ ելևմտից մատեանի մուտքի բաժնում 71 երեսում «հարիւր երեսուն ռուբլի»-ն ջնջած «հարիւր քսան» է դարձրած. 93 երեսում «մի ռուբլի» ջնջած «30 կոպ.» է դարձրած, 95 երեսում «հինգ ռուբլին» ջնջած «չորս»-է դարձրած և այլն։ Ելքի բաժնում 134 երեսում «մի ռուբլի»-ն ջնջած դարձրած է «երկու ռուբլի», և այլն։ Սեպտեմբերի ծախքից յետոյ գրած է օգոստոսի ծախքերը, հոկտեմբերից յետոյ սեպտեմբերինը և այլն։ Եւ այս բոլորի մասին չկայ ոչ մի բացատրութիւն, հոգաբարձական ոչ մի արձանագրութիւն։

Դ. ԳԱՆՁԱՊԱՀԻ ՄԱՍԻՆ. 1) Ինչպէս երևում է հոգաբարձ. ժողովների արձանագրութիւններից և հաշուեմատեաններից, դպրոցական ծախքերի մեծ մասը գանձապահն արել է ինքնակամ, առանց հոգաբարձական խորհրդի որոշման։

2) Ինչպէս երևում է հոգաբ. խորհրդի արձանագրութիւնների և հաշուեմատեանների համեմատութիւնից՝ գանձապահը ծախսեր է արել, հակառակ հոգաբարձական խորհրդի որոշման։ Այսպէս հոգաբ. խորհուրդն իր 1905 թ. հոկտ. 12-ի նիստում որոշել է Աբիս. Տէր-Յակովբեանցին 22 դասի համար ռոճիկ

300 ռուբլի, այն ինչ ըստ հաշուեմատեանի տրուած է 330 ռուբլի, 1906 թ. օգոստ. 4-ի հոգաբ. ժողովը որոշել է նոյն Տէր-Յակովբեանցի 24 դասի համար 400 ռուբլի, ըստ հաշուեմատեանի տրուած է 460 ռ., 1907 թ. յունիսի 17-ի ժողովը որոշել է Յակովբ Տօնականեանցին 550 ռուբլի ռոճիկ, հաշուեմատեանով տրուած է 570 ռուբ. նոյն ժողովում Տիգ. Տօնականեանի համար ռոճիկ է որոշուած 400 ռուբ., հաշուեմատեանով տրուած է 440 ռուբլի, նոյն ժողովը որոշել է Միքայել Այվազեանցին 500 ռուբ. վճարած է 540 ռուբ., Աբ. Տէր-Յակովբեանցին 500 ռուբ., վճարած է 520 ռուբլի։ Եւ այս աւելորդ վճարածների մասին ոչ բացատրութիւն կայ և ոչ որևէ արձանագրութիւն։ 1905—6 ուս. տարեայ համար հոգաբ. իր 1905 թ. հոկտ. 12-ի նախահաշուով որոշել է ծախսել 5980 ռուբ, այն ինչ գանձապահը ծախսել է 6744 ռ. 98 կ. այնէ 764 ռ. 98 կոպ. աւելի հոգաբարձութեան որոշածից։ (1906—7 ուս. տարեայ համար նախահաշիւ չը կայ) 1907—8 ուս. տարեայ համար հոգաբ. խորհուրդը որոշել է իր 1907 թ. օգոստոսի 15-ի ժողովում 7230 ռուբլի ծախք, մինչդեռ գանձապահը ծախսել 7752 ռուբ. 3 կ. 522 ռուբ. 3 կ. աւել հոգաբ. որոշումից և այս բոլորի մասին չը կայ, ոչ որևէ բացատրութիւն և ոչ էլ արձանագրութիւն։

3) Նախկին հոգաբարձութեան գանձապահ պ. Վ. Շահպարոնեան ապօրինի կերպով ծախսել է դրպրոցական փողերն այն ժամանակ, երբ այդ ծախքերն անելու ոչ իրաւունք և ոչ էլ լիազօրութիւն ունէր։ Այպէս 1908 թ. օգոստ. 4-ին հաստատում է նորընտիր հոգաբ. կազմն և անմիջապէս ընտրելով իրեն համար գանձապահ պ. Վ. Կարապետեանին, պաշտօնական գրութեամբ առաջարկում է նախկին հոգա-

բարձրութեանն հաշիւները յանձնել նոր կազմին։ Սակայն չը նայելով նոր հոգաբարձութեան քանիցս պաշտօնական դիմումներին, նախկին գանձապահ պ. Վ. Շահպարոնեան, փոխանակ հոգաբարձութեան իրաւացի պահանջը կատարելու, շարունակում է ծախսել դպրոցական փողերից և օգոստոսի 4-ից (1908 թ.) մինչև հոկտ. 10-ը ծախսում է 2532 ռուբ. 39 կոպ., որը միանգամայն ապօրինի է գտնում յանձնաժողովս։

4) Գանձապահ պ. Վ. Շահպարոնեանի հաշուետուութեան վերջին կէտը բացարձակապէս սուտ է։ Այսպէս թէ հաշուեմատեանում և թէ տպագրուած հաշուում գրում է՝ «Մնում է առձեռն դրամ 478 ռ. 30 կոպ., որը յանձնեցինք 1908—9 ուս. տարուայ հոգաբ. գանձապահին»։ Մինչդեռ 1908—9 ուս. տարուայ հոգաբ. գանձապահ պ. Վ. Կարապետեանն իր 23-ն յունվարի 1909 թ. գրութեամբ յայտնում է յանձնաժողովիս՝ «նախկին գանձապահից չեմ ստացել և ոչ մի կոպէկ»։ Այնուհետև նախկին գանձապահ Վ, Շահպարոնեան իր անթուակիր գրութեամբ բացատրում է, որ «478 ռուբ. 30 կ. անցեալ տարի սեպտ. և հոկտեմբեր ամիսներին վճարած է ուսուցիչներին ռոճիկ, որի հաշիւն արդէն ներկայացրած է նոր գանձապահ պ. Վ. Կարապետեանին»։ Այն ինչ պ. Վ. Կարապետեան իր յունիսի 21-ի գրութեամբ յայտնում է՝ որ «ինքը ոչ մի հաշիւ չէ ստացել պ. Վ. Շահպարոնեանից»։ Յանձնաժողովիս վերջին պահանջին պատասխանում է պ. Վ. Շահպարոնեան, որ 478 ռուբ. 30 կոպէկի համար «ինքը կը վերցնի փաստաթղթեր և կը ներկայացնի յանձնաժողովին»... բայց յանձնաժողովիս այդ «փաստաթղթերը» չը ներկայացրեց պ. Վ. Շահպարոնեանը։ «Թէև ինքը մասնաւոր կերպով տուել է հաշիւ նոր գանձապահին, բայց նա չէ ընդունել, առաջարկելով յանձնել յանձնաժողովիդ». (տես 28 յուլիսի յանձնաժ. արձանագր.։ Արդ, ինչպէս երևում է վերոգրեալներից, սոյն խնդրի առթիւ երեք անգամ ստում է նախկին գանձապահ պ. Վ. Շահպարոնեան։ 1) Առձեռն դրամ և ոչ մի կոպէկ չէ յանձնել նոր գանձապահին. 2) Նախկին գանձապահը ոչ «մասնաւոր» և ոչ էլ պաշտօնապէս կարող էր հաշիւ ներկայացնել նոր գանձապահին 478 ռուբ. 30 կոպէքի, քանի որ այդ գումարի համար մինչև այժմս էլ չը կան փաստաթղթեր, ինչպէս խոստովանուեց ինքը պ. Վ. Շահպարոնեան յունիսի 28-ին։ (Տես յանձնաժ. 28 յուն. արձանագ.) և 3) 1908 թ. սեպտեմբերին չէր կարող ուսուցիչներին ռոճիկ տուած լինել, քանի որ սեպտեմբերին դեռ յայտնի չէր ուսուցչական կազմը, իսկ եթէ յիրաւի տուել է ռոճիկ դեռ չը հաստատուած ուսուցիչներին, վարուել է բացարձակապէս ապօրինի։ Ինչևիցէ, ուսումնարանի այդ 478 ռ. 30 կ. մնում է պ. Վ. Շահպարոնեանցի վրայ։

Դ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՅՔԻ (Ինվենտար) ՄԱՍԻՆ. 1) Հասարակական թէ պետական իւրաքանչիւր հիմնարկութիւն ունենում է առանձին ժապաւինեալ մատեան, ուր միատմի արձանագրուած են լինում այդ հաստատութեան գոյքն ու կայքը։

Եկեղ.-ծիսական հոգաբարձութիւնն ևս կանոնադրութեան § 73-ի համաձայն պիտի ունենար մի ժապաւինեալ մատեան, ուր արձանագրուած լինէր եկեղ.-դպրոցական գոյքն ու կայքը։ Մինչդեռ նախկին հոգաբարձութիւնը ոչ միայն այդպիսի ժապաւինեալ մատեան չունի, այլ չունի նոյն իսկ դպրոցական գոյքի մի հասարակ ցուցակ, որով կարևոր

լինէր ստուգել դպրոցի ունեցածը։

2) Կանոնադրութեան § 78-ի համաձայն, եկեղ.-դպրոցական գոյքի և կայքի ամբողջութեան վրայ հսկելը հոգաբարձութեան անմիջական պարտաւորութիւնն է։ Մինչդեռ նախկին հոգաբարձութեան անփութութեան ու անպարտաճանաչութեան շնորհիւ դպրոցական իրերից ու կահ կարասիներից շատերը գտնւում են մասնաւոր մարդոց մօտ, որոնք կամ սեփականել են արդէն, կամ անվճար օգտւում են այդ իրերով։ Այսպէս՝ ինչպէս երևում է հաշուեմատեանից, դպրոցն ունի ֆիզզարմոն, (ելքի մատեանում գրւած է«Ֆիզզարմոնը կարկատելու ծախք» երկու անգամ), մինչդեռ դպրոցում ֆիզզարմոն չը կայ, այլ չորրորդ տարին է՝ ինչ ուսուցիչ Տիգ. Տօնականեանի տանն է և նա էլ օգտւել ու օգտւում է մինչ ցարդ։ Դպրոցի պատի ժամացոյցը ուսուցիչ Յով. Բարսեղեանի տանն է և այլն։ Այդպէս և դպրոցական շատ իրեր, որոնց ի՞նչքան և ո՞ւմ լինելն մանրամասն ստուգելու հնարաւորութիւն չունի յանձնաժողովս։

3) Եկեղ.-ծխակ. կանոնադրութեան § 77-ի համաձայն հին հոգաբարձ. կազմը պաշտօնից հեռանալիս, պարտաւոր էր պատշաճաւոր արձանագրութեամբ եկեղ.-դպրոցական ամբողջ կայքն ու գոյքը յանձնել նոր հոգաբարձութեան։ Այն ինչ արդէն մի ամբողջ ուսումնական տարի է, որ նախկին հոգաբարձութիւնը դպրոցական գոյքը դեռ պաշտօնապէս չէ յանձնել նոր կազմին, չը նայելով վերջինիս քանիցս պաշտօնական դիմումներին։

Ե. ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿՐՊԱԿՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ 1) Եկեղեցապատկան կրպակների շահագործումը, որ դպրոցական գլխաւոր մուտքերից

մէկն է կազմում, վարել է հոգաբ. գանձապահն ինքնակամ, ըստ իր հայեցողութեան. քրէհով տւել է ինքը, պայմաններ կապել ու ստորագրել է դարձեալ ինքը և թէև հաշուեմատեաններում կրպակներից մի քանիսի մասին գրւած է թէ «տրւում է աճուրդով», սակայն ոչ արձանագրութիւն կայ այդ մասին, ոչ պայմանների սկզբնական նախագիծ, մշակած և հաստատած հոգաբ. ամբողջ խորհրդի կողմից, և ոչ որևէ փաստաթուղթ, որից երևար հոգաբարձական ամբողջ կազմի մասնակցութիւնն այդ դպրոցների համար այնքան կարևոր ներկայութիւն ունեցող խնդրում։

2) Կրպակների հաշուեմատեանում հոգաբարձութեան գանձապահն իր ձեռքով գրում է՝ «այսինչը (ազգանուն) մինչև 1905 թ. (ամսաթիւ) պարտ է մնում է այսքան (գումարը պարտքի), այնինչը այնքան»... և այլն, մինչդեռ չկայ ոչ մի փաստաթուղթ, ոչ մի արձանագրութիւն, որով հնարաւոր լինէր ստուգել, թէ յիրաւի յիշեալ քրէհողն այդքա՞ն է մնում պարտ դպրոցին, թէ՞ կրկնակին կամ յիշւածի կէսը, և թէ ի՞նչ հաշւով է մնում այդքան պարտք։

Ծանօթ. «Գանձապահ պ. Վ. Շահպարոնեան այս խնդրի առթիւ տուեց հետևեալ բացատրութիւնը, թէ այդ պարտքերի և հաշիւների մասին չը կայ ոչ մի փաստաթուղթ և ինքն հաշուել է այդ պարտքերը դերեկսայից իր ձեռքն անցած հատ ու կտոր թղթերից, որովհետև իրան ոչ մի ցուցակ չէ եղել յանձնած» (տես յանձնաժ. 28 յունիս. 1909 թ. արձանագր.)

Յանձնաժողովս գանձապահի սոյն բացատրութիւնը գտաւ անբաւարար, որովհետև, նախ՝ գանձապահը պարտաւոր էր կրպակների հաշուեմատեանին կցել և այն «հատ ու կտոր թղթերը», որոյ հիման վրայ կազմել է իր հաշիւները հին պարտքերի վերաբերմամբ, որպէսզի հաշիւները քննողն ևս հնարա-

ւորութիւն ունենար տուգել այդ գումարների ճշտութիւնը, երկրորդ՝ ծայրահեղ դէպքում այդ հաշիւները պիտի քննէր ու կազմէր հոգաբարձական խորհուրդն իր ամբողջ կազմով, պատշաճաւոր արձանագրութեամբ, ու մանրամասն բացատրութեամբ, երրորդ՝ որ ամենաուղիղ և օրինական ճանապարհն էր, ծբխական ժողովի ընտրած ներկայացուցիչները պիտի քննէին, կազմէին այդ հին պարտքերի հաշիւներն և պատշաճաւոր արձանագրութիւն կազմելուց յետոյ, հոգաբարձութիւնը նոր պիտի ընդունէր այդ հաշիւները ու մտցնէր իր հաշուեմատեանում։

3) Շատ կրպակների առաջին տարւայ մի ամբարայ քրէհը չէ մտցրած հաշուեմատեան, այսպէս՝ կրպակն, ինչպէս երևում է պայմանագրից, քրէհով է տրւած 1905 թ. դեկտ. 15-ից, հաշուեմատեանի մէջ քրէհը հաշուած է 1906 թ. յունվարի 15-ից և պատճառի մասին դարձեալ ոչ մի փաստացի պատճառաբանութիւն կայ և ոչ հոգաբարձական արձանագրութիւն։

Ծանօթ. Գանձապահ պ. Վ. Շահպարոնեան բացատրեց որ «կրպակներից շատերի առաջին տարւայ քրէհը չէ մտած հաշուեմատեան, որովհետև հաշուած է հին (դերեկցիայից մնացած) պարտքի վրայ» (Տես 28 յունիսի յանձնաժ. արձանագր.)։

Յանձնաժողովս գանձապահի լիշեալ բացատրութիւնը միանգամայն անբաւարար ու տարօրինակ գտաւ։ Նախ՝ պայմանագրերի հէնց առաջին յօդւածի համաձայն, քրէհողները պարտաւորւում են «վարձը վճարելու կանխիկ եռեակներով (տրէթով)։ «հակառակ դէպքում, եթէ քրէհը չը վճարեցի հոգաբարձութեանը, պարտաւորվում եմ անմիջապէս դատարկելու կրպակը և վճարելու կրպակի վարձը»։ Հետևապէս գանձապահը ոչ մի իրաւունք չունէր պարտ-

քերը թողնել կրպակները քրէհողների վրայ։ Եւ երկրորդ՝ դարմանալի է, թէ կրպակները դեռ նոր քրէհով տալիս, որտեղից կարող էր գիտնալ գանձապահը, թէ քրէհողները չը պիտի վճարեն առաջին ամբարայ քրէհը, որ հաշուել է պարտք և աւելացրել հին՝ դերեկցիայից մնացած պարտքի վրայ, որ գանձապահն համարում է կորած փող։

4) № 3 կրպակի քրէհը պայմանի մէջ գրած է 36 ր. 15 կոպ. տարեկան, իսկ հին հաշուեմատեանում 33 ր. 15 կոպ. տարեկան 3 ր. պակաս։

Ծանօթ. Գանձապահ պ. Վ. Շահպարոնեան բացատրեց, որ դա մի պարզ սխալմունք է և պէտք է հաշուել պայմանագրի համաձայն։ (Տես յունիսի 28-ի արձան. յանձ.)։ Հետևապէս հաշուեմատեանի մուտքի բաժնում պէտք է աւելացնել ինն ռուբլի (9 ռուբլի երեք տարեան)։

5) № № 2 և 4 կրպակները քրէհով են տրւած առանց պայմանագրի և չը կայ այդ մասին որևէ բացատրութիւն։

6) № 4 կրպակի քրէհից 2 ր. 66 կոպ. պակաս է մտցրած մատեանի մուտքի բաժնում և քրէհողներից Տիգրան Անախասեանն, ինչպէս գրում է գանձապահն իր ձեռքով հաշուեմատեանում «պարտ է մընում ուսում Նարանին բարաթով 72 ռուբլի։

Նաղարէթ Աստուածատրեանը՝ 4 ռուբ. 67 կոպ. որի համար կայ բարաթ, և Եղիշէ Անախասեանը առանց բարաթի չորս ռուբլի, բոլորը 80 ռուբ. 67 կ.» (տես կրպակների հաշուեմատ. № 4 կրպակի հաշիւը)։

Յանձնաժողովս գանձապահի վարմունքն այս կէտում ևս զանում է ապօրինի, որովհետև, նախ՝ կրպակի քրէհողը պայմանագրի 1 յօդ. համաձայն, «եթէ չը վճարէ քրէհը կանխիկ, պարտաւորվում է անմիջապէս դատարկելու կրպակը և վճարել կրպակի վարձը», մինչդեռ գանձապահն հակառակ պայմանա-

գրի պարզ մաքին, դպրոցին հասանելիք փողերը թողել է մասնաւոր մարդոց վրայ առանց ծխական ժողովի գիտութեան, որ անմիջական տէրն է այդ փողերի։ Երկրորդ՝ թէև գրած է հաշուեմատեանում որ Տիգ. Անախասեանն ու Նազ. Աստուածատրեանը պարտ են մնում «քսաբաթով», այնինչ չը կան այժմ այդ բարաթները և գանձապահը բացատրեց, որ թէև ինքը գրել է, որ կան բարաթներ, բայց յիշեալ պարտապանները չեն տուել այդպիսի բարաթներ։ (Տես յանձնաժ. 28 յունիսի արձան.)։ Այն ինչ գանձապահը ներկայացրել է յանձնաժողովիս մի ուրիշ բարաթ նոյն պարտապաններից, Նազ. Աստուածատրեանցի անունով, բայց այդ բարաթը 15 ր. 84 կոպ. գումարի է և չը կայ յիշած հաշուեմատեաններից ոչ մէկում։ Բացի այս, պարտապան Աստուածատրեանը բացատրեց, որ ինքը վաղուց վճարել է այդ պարտքը գանձապահ պ. Վ. Շահպարոնեանցին և մնացել է վճարելու մէկ թէ երկու ռուբլի, որի համար և բարաթը թողել է Շահպարոնեանի մօտ, հաւատալով նրա աղնութեանը։ (տես յանձ. 29 յունիսի արձան.)։

7) № 8 կրպակի երկու ամսայ քրէհը (դեկտ. 15-ից մինչև փետրվ. 15-ը) գրած է 4 ր. 35 կոպ., այնինչ կրպակը քրէհով է տրուած տարեկան 52 ռուբլով, որի համաձայն երկու ամսան քրէհը կանէ 8 ր. 66 կոպ., և ոչ 4 ր. 35 կոպ., իսկ օգոստոսի 15-ից մինչև դեկտ. 15-ը (1905 թ.) երկու ամսան քրէհը բոլորովին չէ մտցրած հաշուեմատեան, որ անում է 8 ր. 66 կոպ. և չը կայ այդ մասին դարձեալ, ոչ արձանագրութիւն, և ոչ էլ որևէ բացատրութիւն։

Մանսթ. Գանձապահ պ. Վ. Շահպարոնեան այս կէտի առթիւ բացատրեց, թէ «№ 8-ի քրէհի պակասորդը կամ սխալմունք է, կամ քրէհողն ընկեր է ունեցել, որ չէ յանձնել երկու ամսայ քրէհի կէսը։ Իսկ մինչև դեկտ. 15-ը քրէհը չէ մտած մատեան, որովհետև քրէհողն առանց այն էլ շատ պարտք ունէր դերեկցիայից մնացած»...,

քրէհողն առանց այն էլ շատ պարտք ունէր դերեկցիայից մնացած, որ չէր կարողանում վճարել՝ (Տես յանձն. 28 յունիսի արձան.)։

Գանձապահի սոյն բացատրութեան առաջին կէտը յանձնաժողովս գտնում է միանգամայն անբաւարար, որովհետև, նախ հասարակական ընտրեալը, պաշտօնեան պարտաւոր է իրեն յանձնուած գումարների համար փաստացի ապացոյցներ և ոչ պայմանական բացատրութիւններ տալ, ինչպէս՝ «կամ սխալմունք է, կամ քրէհողի ընկերը յանձն չէ առել»։ Երկրորդ՝ ինչպէս երևում է ընդհանրապէս կրպակների շահագործումից և մասնաւորապէս գանձապահի սոյն բացատրութիւնից, ծխական հոգաբարձութեան կազմած պայմանագրերը եղել են լոկ ձևականութեան համար և երբէք չեն կատարուել։ Այսպէս, մինչդեռ պայմանագրի մէջ պարզ ասած է՝ «քրէհը պարտաւոր եմ վճարել կանխիկ եռեակներով (տրէթով), եթէ չը վճարեցի՝ պարտաւորվում եմ....» այնինչ շատ-շատերը ոչ՝ միայն կանխիկ չեն վճարել, ոչ՝ միայն եռեակներով չեն վճարել, այլ նոյն իսկ տարիների քրէհը պարտ են մնացել դպրոցին, և որովհետև հոգաբարձութիւնը ոչ մի միջոցի չէ դիմել այդպիսիներից շատերի դէմ, ուստի և նրանք առանց քրէհ վճարելու օգտուել և մինչև այժմս էլ օգտուում են դպրոցապատկան կրպակներով։ Գանձապահի բացատրութեան երկրորդ կէտը, թէ՝ «կրպակի երկու ամսայ քրէհը չէ մտցրած հաշուեմատեան, որովհետև քրէհողն առանց այն էլ շատ պարտք ունէր դերեկցիայից մնացած»..., յանձնաժողովս համարում է միանգամայն տարօրինակ և ապօրինի, որովհետև ոչ միայն հոգաբարձութեան գանձապահն ինքնագլուխ, այլ և հոգաբարձական խորհուրդն իր ամբողջ կազմով իրաւունք չունի հասարակական փողերը սրան կամ

նրան նուիրելու, առանց ծխական ընդհանուր ժողովի գիտութեան, որը միակ տէրն ու տնօրէնն է այդ փողերի։

8) № 13 կրպակը, որով օգտուելիս է եղել Կ. Կօշտոյեանցը. Հոգաբարձական խորհրդի 1907 թ. յունիսի 19-ի որոշմամբ քրէհով է տրուում Դիաթեանցին 1907 թ, յունիսի 15-ից մինչև 1908 թ. օգոստոսի 15-ը։ Մինչդեռ գանձապահ պ. Վ. Շահպարոնեան հակառակ հոգաբ. խորհրդի որոշման, պայման է կապել Դիաթեանի հետ յիշեալ կրպակը տալով Դիաթեանցին մինչև 1909 թ. յունվարի 20-ը։

Ծանօթ. Գանձապահ պ. Վ. Շահպարոնեան բացատրեց, որ յիշեալ կրպակի պայմանը կազմել է մինչև 1909 թ. յունվարի 20-ը, որպէսզի պայմանաժամը համապատասխանեցնի Դիաթեանների վարձած միւս կրպակների ժամանակի հետ։ (Տես յանձնաժ. 28 ն յունիսի արձան.) Յանձնաժողովս գանձապահի վարմունքը գտնում է դարձեալ ապօրինի, որովհետև այդպիսի համաձայնութիւն կարող էր կայացնել միայն և միայն հոգաբարձական խորհուրդն իր լրիւ կազմով և ոչ գանձապահն ինքնագլուխ։

9) Հոգաբ. խորհրդի նոյն արձանագրութեան համաձայն (1907 յունիսի) № 13 կրպակը տրուում է քրէհով է Դիաթեանցին միայն այն պայմանով, որ նա վճարէ կրպակի նախկին քրէհող Կօշտոյեանի պարտքը դպրոցին ամբողջապէս։ Ինչպէս երևում է գանձապահի հաշուեմատեանից, Կօշտոյեանը պարտ է մնացել դպրոցին 96 բուբ. 50 կոպ։ Այն ինչ նոյն հաշուեմատեանից երևումէ, որ Դիաթեանն այդ պարտքից վճարել է միայն 50 բուբլի և այնուամենայնիւ օգտուել է կրպակից, չը նայելով, որ ինչպէս յիշուած է հոգաբ. խորհրդի նոյն արձանագրութեան մէջ, նոյն կրպակին Սարգիս Սլիկեանը բացի քրէհից առաջարկել է 150 բուբլի էլ աւելի։ Հոգաբարձութիւնը ոչ իրաւաբանական և ոչ էլ բարոյական որևէ հիմք ունէր մերժել աւելի վճարողին և հասարակական կայքը տալ իր ցանկացած մարդուն, հակառակ հասարակական շահերի։ Իսկ գանձապահն իր կողմից պարտաւոր էր ճշտութեամբ իրագործել հոգաբարձական խորհրդի որոշումն և Կօշտոյեանի պարտքը լիովին ստանալ Դիաթեանից և ապա թոյլ տալ օգտուելու կրպակից։

Ծանօթ. Գանձապահի բացատրութիւնն այս առթիւ յանձնաժողովս անբաւարար է համարում, որովհետև, նախ՝ առանց վաստերի է և երկրորդ հակասում է պայմանագրի պարզ մտքին։

10) № № 14, 15 և 16 կրպակների հինգ ամիս հինգ օրւան քրէհը (1905 թ. օգոստ. 15-ից մինչև 1906 թ. յունվարի 20-ը) որ անում է 195 բուբլի 85 կոպ. չէ մտցրած հաշուեմատեանի մուտքի մասում։

Ծանօթ. Գանձապահն այս խնդրի առթիւ յայտնեց, որ յիշեալ կրպակներն այդ ժամանակամիջոցում դատարկ են եղել։ Սակայն դարձեալ չը կայ որևէ վաստ, որևէ գրաւոր ապացոյց, թէ ինչքան ժամանակ դատարկ են եղել յիշեալ կրպակները։ Մինչդեռ հոգաբարձութիւնն այդ առթիւ գոնէ պիտի կազմէր արձանագրութիւն, որից յայտնի լինէր ճշմարտութիւնը։

11) № 16 կրպակն, ինչպէս երևում է հաշուեմատեանից 1906 թ. յունվ. 20-ից մինչև 1907 թ. յունվարի 20-ը քրէհով է տրուած Յարութիւն Դիլանեանին տարեկան 155 ր. քրէհով։ Բայց ոչ պայմանագիր կայ, ոչ էլ հոգաբարձ. խորհրդի արձանագրութիւն այդ մասին, որից օգտուելով Յար. Դիլանեանը պայմանաժամը չը լրացած դատարկել է կրպակը (յայտնի չէ ինչ) և այդ կրպակը 1906 թ. յունիսի 20-ից քրէհով է տրուած ուրիշին։ Հետևապէս Յար. Դիլանեան վճարած պիտի լինէր եթէ ոչ ամբողջ տարեայ քրէհը, որ 155 բուբլի, գոնէ մինչև այդ ժամանակուայ քրէհը, որ անում է 66 բուբ. 70 կոպ.։ Այն ինչ հաշուեմատեանի համաձայն Դիլանեանը «փետրվարի

Գոս. Գրադարան
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Ц. им. А. Мясницяна
УРБ.

20-ին վճարել է 50 ռուբլի» միայն և յետոյ աւելացրած է՝ «դուքեանը վայր գցեց Դիլանեանը, տուած 50 ռուբլին թողնելով ուսումնարանին» (չէ յիշած դատարկելու օրն ու ժամանակը)։ Յայտնի չէ թէ ինչ 50 ռուբլի է, որ Դիլանեանը «թողնումէ ուսումնարանին»։ Տուգանք է կրպակը պայմանաժամից առաջ դատարկելու համար, թէ՞ կրպակի քրէհն է։

Թէ տուգանք է. ինչու 1906 թ. յունվարի 20-ից մինչև յունիսի 20-ի քրէհը, որ անում է 66 ռուբլի 70 կոպ. չէ մտած հաշուեմատեանի մուտքի բաժնում։ Թէ քրէհի հաշուին է ստացած, ինչու մնացած 16 ռ. 70 կ. չէ ստացուած և գրուած հաշուեմատեանում։ Երկու դէպքումն ևս Դիլանեանը պարտ է մնում դրպրոցին մի որոշ գումար, մինչդեռ հաշուեմատեանում գանձապահի գրածի համաձայն, կարծէք Դիլանեանը բարերարութիւն է արել, «տուած 50 ռուբլին թողնելով ուսումնարանին»։

Ծանօթ. Գանձապահ պ. Վ. Շահպարոնեան բացատրեց, թէ «№ 16 կրպակը թէև վարձել էր Յարութիւն Դիլանեանն և գրաւական տուել 50 ռուբլի, բայց որովհետև ինքը բոլորովին չը նստաւ այդ կրպակը, ուստի 50 ռուբլին թողեց յօգուտ ուսումնարանի։ Ցանձնաժողովս գանձապահի սոյն բացատրութիւնն ևս գտաւ անբաւական և զուրկ ճշմարտութիւնից, որովհետև իւրաքանչիւր գործի մէջ գրաւական վերցնում են բանաւոր համաձայնութիւնից անմիջապէս յետոյ։ Այն ինչ, ինչպէս երևում է հաշուեմատեանից, յիշեալ կրպակը քրէհով է տրուած յունվարի 20-ին, իսկ 50 ռուբլին ստացուած է փետրվարի 20-ին։ Բացի այս, ինչպէս երևում է բոլոր կրպակների պայմանագրերից, կրպակ քրէհողներից ոչ մէկը գրաւական վճարելիս չէ եղել, այլ պայմանագրի համաձայն պարտաւորուում են «վանխիկ վճարել քրէհը եռեակներով (տրէթով), իսկ եթէ չը վճարեցի կանխիկ, պարտաւորուում եմ անմիջապէս դատարկել կրպակը և վճարել կրպակի վարձը»։ Մինչդեռ Դիլանեանը ոչ տրէթն է վճարել լեռվին և ոչ էլ կրպակի վարձը, և, որովհետև գանձապահի անպարտաճանաչութեան շնորհիւ իր ժամանակին չէ կազմուել պայմանագրերը, տուժել է դպրոցը նիւթապէս։

12) № № 17, 18 և 19 կրպակները պայմանի համաձայն քրէհով են տրուած Յար. Դիլանեանցին 1905 թ. հոկտ. 30-ից. այնինչ հաշուեմատեանի համաձայն քրէհով են տրուած 1905 թ. յուլիսի 1-ից։ Պայմանագրի համաձայն քրէհով են տրուած երեք տարի ինն ամիս ժամանակով, (պայմանագրի մէջ ինն ամիսն աւելացրած է յետոյ), այն ինչ հաշուեմատեանի համաձայն տրուած է չորս տարի ժամանակով։ Ինչպէս երևում է հաշուեմատեանից և պայմանագրից, յիշեալ կրպակների վերաբերմամբ գանձապահ պ. Վ. Շահպարոնեան կատարել է ակնյայտնի զեղծում, հաշուեմատեանում «երեք տարի»-ն ջնջելով «չորս» դարձնելով, «մինչև 1908 թ.» դարձնելով «մինչև 1909 թ.» «յուլիսի 15-ը» դարձնելով «յուլիսի 1-ը». և պայմանագրի մէջ աւելացնելով «որն ամիս», որ յետոյ դարձրած է ինն ամիս»։ Ինչպէս հաշուեմատեանից, նոյնպէս և պայմանագրից պարզ երևում է, որ ինչպէս բոլոր միւս կրպակները, նոյնպէս և այս կրպակները տրուած են եղել քրէհով երեք տարի ժամանակով։ Այդպէս էլ գրուած է հաշուեմատեանում։

«Սկսած 1905 թ. յուլիսի 15-ից մինչև 1906 թ. յուլիսի 15-ը կանէ վարձ . . . . 480 ռուբլի»
«Սկսած 1906 թ. յուլիսի 15-ից մինչև 1907 թ. յուլիսի 15-ը կանէ . . . . . 480 ռուբլի»
«Սկսած 1907 թ. յուլիսի 15-ից մինչև 1908 թ. յուլիսի 15-ը կանէ . . . . . 480 ռուբլի»

«Գումար . 1440 ռուբլի»

Այս բոլորից յետոյ, ինչպէս երևում է, 1908 թուին, երբ լրանում է նախկին հոգաբարձութեան պաշտօնավարութեան ժամանակամիջոցը, գանձապահն Յար. Դիլանեանի պայմանագրի ժամանակա-

միջոցը մի տարի ևս երկարացնելու համար՝ կատարում է վերոգրեալ գեկուցումը՝ թէ՛ պայմանագրի և թէ՛ հաշուեմատեանի մէջ թուերը ջնջելով ու փոփոխելով և այդ միջոցին իր գրած նախկին հաշուի տակ նոր աւելացնում է՝—

«Սկսած 1908 թ. յուլիսի 1-ից մինչև 1909 թ. յուլիսի 1-ից»
«քրէհը կանէ . . . . . 480 ռուբլի։»

«Գումարը կանէ 1920 ռուբլի»։

Գանձապահն երբէք չէր կարող մի ամբողջ տարուայ (1908-1909 թ.) քրէհը սխալմամբ մոռանալ, այն էլ 480 ռուբլու պէս մի խոշոր գումար. և երեք տարուայ քրեհը գումարելուց յետոյ, նոր այդ գումարի տակ գրել ու աւելացնել, ինչպէս այդ չէ արած միւս կրպակներից եւ ոչ մեկի վերաբերմամբ։ Բացի այս, ինչպէս երևում է հաշուեմատեանից, Դիլանեանն 1908 թուին վճարել է կրպակի քրէհը «մինչև յուլիսի 15-ը, զարմանալի է թէ ինչու 1908—9 թուի համար քրէհը վճարում է յուլիսի 1-ից, քանի որ, ըստ հաշուեմատեանի, մինչև յուլիսի 15-ը արդէն վճարած է եղել։

13) Համաձայն կրպակների պայմանագրերի երկրորդ յօդ. «կրպակների մանր կարկատանը» քրէհողների պարտաւորութիւնն է։ Մինչդեռ հակառակ պայմանագրի յիշեալ յօդուածի, գանձապահը, նոյնիսկ առանց հոգաբարձ. խորհրդի որոշման, ինչպէս հաշուեմատեանի ծախքերի բաժնում, այնպէս և կրպակներից ստացուած քրէհի հաշուեմատեանում մացրել է այդպիսի ծախքեր, կամ քրէհից որոշ մաս հաշուել է այդպիսի կարկատանների, նոյն իսկ առանց յականէ անուանէ յիշելու, թէ ի՞նչու, ի՞նչ կարկատաններեն, ովքեր են կատարել այդ կարկատանները, ի՞նչ գնով. և ոչ՛ էլ այդ ծախքերն ապացուցող

փաստաթղթեր կան։ Այսպէս, գրում է գանձապահը, «№ 2 կրպակի քրէհի 4 ռուբլին հաշուած է կարկատանի, № 16 կրպակի վերանորոգութեան տրուած է 1 ռ. 60 կոպ., 1906 թ. յունիսի 20-ին Լևոն Զախմախչեանը ծախսել է կրպակի վերանորոգութեան 41 ռուբլի և այլն և այլն»։ Բայց թէ ո՞վ է որոշել, ո՞վ է լիազօրութիւն տուել կատարել այդ ծախքերը, չկայ ոչ մի յիշատակութիւն։

Ծանօթ. Սոյն խնդրի առթիւ գանձապահն յայտնեց, որ «այդ կարկատանները եղել են հիմնական կամ քրեհով տալուց առաջ»։ Գանձապահի բացատրութիւնը չի համապատասխանում Ճշմարտութեանը, որովհետև նախ՝ եթէ կարկատաններ կատարուել են քրէհով տալուց առաջ, չէին կարող այդ կարկատանների ծախքերը հաշուել քրէհի մէջ, քանի որ քրէհով տալուց առաջ, ո՛չ քրէհողը կարող էր լայտնի լինել և ոչ էլ քրէհը։ Երկրորդ՝ 1 ռ. 60 կոպ. 4 ռուբլով չի կարելի «հիմնական վերանորոգութիւն» անել։ Ծայրահեղ դէպքում եթէ այդ վերանորոգութիւնները (որ յայտնի չէ թէ ինչ վերանորոգութիւններ են) յիրաւի հիմնական են համարուել, յամենայն դէպս ղոցա հիմնական լինելը և դպրոցի ծախքով կատարելը պիտի որոշէր հոգաբարձութեան խորհուրդն իր ամբողջ կազմով և ոչ թէ գանձապահն ինքնագլուխ և ըստ իր հայեցողութեան։

Զ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ։ 1) Իւրաքանչիւր հասարակական հիմնարկութեան ել և մուտքը պիտի հաստատուած լինի արդարացուցիչ փաստաթղթերով։

Նախկին հոգաբարձութիւնը չունի իր պաշտօնավարութեան ժամանակ եղած, ինչպէս մուտքերից, նոյնպէս և ծախքերից շատերի համար պահանջուած օրինական փաստաթղթեր։ Այսպէս՝ 1) կրպակների քրէհից մնացած հին առնելիքների համար չկայ ոչ մի փաստաթուղթ, 2) վիճակախաղից ստացուած արդիւնքների մասին նոյնպէս չկան փաստաթղթեր, 3) 1905 թ. նոյեմբերի 15-ի, 1906 թ. մարտի 18-ի, յունիսի 10-ի, օգոստոսի 5-ի, 1907 թ. յուլիսի 25-ի, օգոստոսի 31-ի, երեք յօդուածներով, սեպտեմբ. 30-ի,

1908 թ. յունվարի 16-ի. մարտ 4-ի, յուլիսի 10-ի, օգոստոսի 6-ի, սեպտեմբերի 27-ի, հոկտեմբերի 10-ի, հայլն, կատարած ծախքերի համար չկայ ոչ մի փաստաթուղթ։

Փաստաթղթերից շատերն ապօրինի են, ուստի և չի կարելի այդպիսիներն ընդունել իբրև ապացոյց՝ կատարած ծախքի։ Այսպէս՝ 1) 1905 թ. հոկտեմբերի 27-ին առնուած է «3 սայլ տարթ Խաչատ. Շահպարոնեանի ձեռամբ». և իբրև հաստատութիւն ստորագրել է Յակովբ Պապոյեան, որը նոյնպէս հոգաբաձու է և իր ստորագրութիւնը չի կարող ծառայել իբրև ապացոյց իր արած ծախքին։

2) 1906 թ. Նոյեմբ, 10-ին «կանապի վերանորոգութեանը» ծախսուած է 6 ր. 65 կոպ. իբրև փաստ ստորագրել է դարձեալ հոգաբարձու Յակովբ Պապոյեան։

3) «Կրպակի մայթերը վերանորոգելու տրուած է 3 ր. 30 կոպ. «իբրև հաստատութիւն» ստորագրել է դարձեալ հոգաբարձու Յակ. Պապոյեան։

4) 1907 թ. փետրվ. 20-ին հիւանդ ուսուցիչ Խախանեանցին Տփխիս տեղափոխելու համար վճարած է հաճի Էլլոզեանցին 14 ռուբլի, իբրև ապացոյց ստորագրել է դպրոցի ուսուցիչ Աբիսողոմ Տէր-Յակովբեան՝ «ստացայ վճարելու համար», առանց ներկայացնելու Էլլոզեանից հաւատարմութիւն։ Նախ՝ Էլլոզեան գրագէտ է և երկրորդ Աբ. Տէր-Յակովբեանի ստորագրութիւնն իբրև ուսուցչի, որ կախումն ունի հոգաբարձութիւնից, չի կարող ծառայել իբրև ապացոյց նոյն հոգաբարձութեան արած ծախքին։

5) Զակցի նալբանդ Մկրտիչ Զախմախչեանցին, նրա աղջկայ (դպրոցի աշակերտուհի) կորած շոլքի համար վճարած է 2 ռուբլի. իբրև փաստ ստորագրել է դարձեալ ուսուցիչ Աբ. Տէր-Յակովբեան։

Ծանօթ. Զարմանալի է, թէ ինչու աշակերտուհու կորցրած շոլքի գինը վճարում է հոգաբարձութեան գանձապահն և ոչ օրոշմամբ։

6) 1907 թ. օգոստ. 30-ին աղքատ աշակերտներին բաժանուած են դասական պիտոյքներ 25 ր. 50 կ. իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ ուսուցիչ Աբ. Տէր-Յակովբեան։

7) 1907 թ. Նոյեմբ. 22-ին մանր ծախքերին տրուած 2 ր. 3 կ. իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ Աբ. Տէր-Յակովբեան։

8) Կրպակների սաչուները շինելու տրուած է փայտի և աշխատանքի համար 35 ր. և իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ ուսուցիչ Աբ. Տէր-Յակովբեան։

9) Նոյեմբ. 14-ին 1905 թ. առնուած է «մի սրլակ թանաք, 20 փ. կէր, 1 մեշօք թեփ, 1 կաշկա սպիտակ հող, մի լամբի ապակի» և իբրև փաստ ստորագրել է նոյն դպրոցի ուսուցիչ Տիգրան Տօնականեան։

10) 1906 թ. յուլիսի 10-ին տրուած է մուզիքայի 3 ռուբլի, և իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ ուսուցիչ Տիգ. Տօնականեան։

11) 1906 թ. յունիսի 10-ին գրած է ելից մատենում «զանազան ծախքեր 18 ր. 40 կոպ.» առանց յիշելու թէ ի՞նչ ծախքեր են և իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ Տիգ. Տօնականեան։

12) 1908 թ. օգոստ. 31-ին գրուած է «մանր-մունր ծախքեր. 47 ր. 73 կոպ.» նախ՝ 47 ր. 73 կոպ. «մանր-մունր ծախք» չէ, երկրորդ չէ յիշուած ի՞նչ ծախքեր են, և երրորդ՝ իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ ուսուց. Տիգ. Տօնականեան։

13) 1906 թ. յունվ. 26-ին առնուած է $^1/_2$ սաժէն

աթար, փետր. 6-ին 3 սահնակ աթար, մարտի 4-ին 2 սահնակ, և իբրև ապացոյց, փոխանակ ծախողների ստորագրութեան, ստորագրել է «վճարեցի Գրիգոր Պապոյեան»։

14) 1906 թ. օգոստ. 31-ին կատարուած ծախքի տակ, Թադէոս Տէր-Պետրոսեանի փոխարէն, ստորագրել է Համազասպ քահանայ Տէր-Գրիգորեան, այնինչ Թ. Տէր-Պետրոսեան գրագէտ է և հետևեալ հաշիւներն ստորագրել է ինքը։

15) Փաստաթղթերից շատերի տակ, իբրև հաստատութիւն, ստորագրել են դպրոցի ծառաները, որոնց ստորագրութիւնն, իբրև հոգաբարձութիւնից կախումն ունեցող անձանց, նոյնպէս չի կարելի ընդունել օրինաւոր։ Այսպէս 1906 թ. յունվ. 11-ին, փետրվարի 3-ի, ապրիլի 14-ի, մայիսի 10-ին երկու անգամ, 1907 թ. մարտի 9-ի, ապրիլի 4-ի, օգոստ, 31-ի, դեկտ. 14-ին երկու անգամ, նոյեմբ. 7-ին կատարուած ծախքերի տակ ստորագրել է, իբրև ապացոյց դպրոցի ծառայ հաճի Կարապետ Յարութիւնեան։

16) 1908 թ. Սեպտ. 27-ին ելից մատենում գրած է՝ «մի վազ, երեք մաթոք թել», յայտնի չէ ինչ վազ և ինչ թել է և ինչու համար է առնուած, քանի որ այդ ժամանակ դեռ դպրոցը բաց չէր, և իբրև ապացոյց, ստորագրել է դարձեալ դպրոցի ծառայ հաճի Կ. Յարութիւնեան։

17) 1906 թ. սեպտ. 15-ի, նոյեմբ. 10-ի, 1908 թ. սեպտ. 17-ի, օգոստ. 11-ի, ծախքերի տակ ստորագրել է դարձեալ դպրոցի ծառան՝ Սարգիս Երիցեան։

18) Փաստաթղթերից մի քանիսի տակ, փողն ստացողի փոխարէն, ստորագրել են այնպիսի մարդիկ, որ այդ միջոցին չեն եղել քաղաքումս, որից պարզ երևում է, որ հաշիւները «սարքած» են յետոյ,

ու մի կերպ ստորագրել են տուած պատահական մարդոց։ Այսպէս՝ 1906 թ. սեպտ. 25-ին Մինաս Մխիթարեանի փոխարէն, նոյն թուի դեկտ. 18-ին դարբին Կարապետ Խաչատրեանի փոխարէն և նոյն ամսի 10-ին դարձեալ Մ. Մխիթարեանի փոխարէն ստորագրել է պ. Վարդան Տէր-Թորոսեան, որ Ախալքալաք է եկել միայն 1908 թուի վերջերը (երկու տարի յետոյ), հետևապէս 1906 թ. հաշիւներից յիշուածներն ստորագրուած են 1908 թուին՝ երկու տարի յետոյ։

III. Ծախքերից շատերի տակ թէև կան ստացողների ստորագրութիւնները, բայց չկան մանրամասն հաշիւներ (счетъ), որից յայտնի լինէր, թէ ինչ իրեր են առնուած, ինչու համար, ինչքան և ինչ գներով։ Այսպէս՝ 1) 1907 թ. օգոստ. 18-ին ձեռագործի իրերի համար վճարած է առանց հաշուի Յար. Դիլանեանին 123 ր. 2) Նոյն օրը Մաղաքեաններին վճարած է դարձեալ-առանց հաշուի 95 ր. 40 կոպ. 3) 1908 թ. դեկտ. 1-ին Խ. Կարապետեանցին երկաթեղէնի համար՝ 12 ր. 68 կոպ. 4) 1908 թ. դեկտ. 1-ին Մաղաքեաններին 23 ր. 55 կոպ. 5) 1908 թ. օգոստ. 31-ին դարձեալ Մաղաքեաններին վճարած է առանց հաշուի 91 ր. 50 կոպ. 6) Նոյն օրը Դիլանեանցին երկու անգամ 125 ր. 33 կոպ., որոնցից ոչ մէկն ոտուգելու հնարաւորութիւն չունի յանձնաժողովս։

IV. Փաստաթղթերից մի քանիսը ոչ միայն ապօրինի, այլ և միանգամայն տարօրինակ են։ Այսպէս՝ 1) 1906 թ. նոյեմբերին առնուած է 3 ֆ. մոմ, նախ՝ չէ յիշուած ինչու համար է և երկրորդ իբրև ապացոյց ստորագրել է ինքը գանձապահ Վ. Շահպարոնեան։ 2) 1906 թ. մարտի 18-ին առնուած են ձեռագործի իրեր, իբրև ապացոյց ստորագրել է դար-

ձեալ ինքը Գանձապահ Վ. Շահպարոնեան։

3) 1908 թ. Սեպտ. 27-ին, պատշգամբի համար առնուած է Վ. Շահպարոնեանից 94 ր. 79 կոպէկի փայտեղէն և իբրև ապացոյց ստորագրել է դարձեալ ինքը գանձապահ Վ. Շահպարոնեան։ Ինքը իրենից գնել է փայտն, ինքն էլ հաստատում է իր ստորագրութեամբ։

4) Նոյն հաշուով հաջի Տէր-Յակովբեանից առնուած է 3 ր. 61 կոպ. փայտեղէն և իբրև փաստ ստորագրել է դարձեալ ինքը գանձապահ Վ. Շահպարոնեան։

Է. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Ինչպէս երևում է արձանագրութիւնների մատեանից, հոգաբ. խորհուրդն ուսուցիչներին իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում որոշել է հետևեալ ռոճիկները՝

	1905-6 ուս. թ		1906-7 ուս. թ		1907-8 ուս. թ	
	Դաս.	Բուբ.	Դաս.	Բուբ.	Դաս.	Բուբ.
Աբ. Տէր-Յակովբեան.	22	300	24	400	24	500
Յակ. Տօնականեանին	22	550	24	560	24	550
Միք. Այվազեանին	24	500	22	500	—	—
Տիգ. Տօնականեանին	24	400	23	400	—	—
Յ. Բարսեղեանին	—	—	24	400	24	500
Լևոն Բունեաթեանին	—	—	—	—	22	300

Յանձնաժողովս, աչքի առաջ ունենալով վերոգրեալն, եկաւ այն եզրակացութեան, որ հոգաբարձութիւնն ուսուցիչներին ռոճիկներ որոշելիս, առաջնորդուել է խնամիական սկզբունքով։ Այսպէս՝ գանձապահ պ. Վ. Շահպարոնեանի փեսայ ուսուցիչն ստացել է 22 դասի համար անընդհատ տարեկան 550 բուբլի, մինչդեռ նոյն կրթական ցենզով ուրիշ

ուսուցիչներ 22 դասի համար ստացել են 300 բուբ. մինչդեռ ոչ մի կրթական ցենզ չունեցող ուսուցիչն 23 դասի համար ստացել է տարեկան 400 բուբլի։

2) Հոգաբարձ. խորհուրդն իր 1906 թ. օգոստ. 4-ի նիստում ոչ մի դպրոց չաւարտած Տ. Տօնականեանցին 23 դասի համար որոշել է 400 բուբլի տարեկան ռոճիկ, իսկ սեպտ. 12-ին (նոյն թիւ) նիստում որոշում է ճեմարանաւարտ Գ. Տէր-Սիմէօնեանցին առաջարկել 24 դասի համար 300 բուբլի տարեկան (մի դաս աւելի Տ. Տօնականեանից և 100 ր. պակաս ռոճիկով), որից պարզ երևում է դարձեալ հոգաբարձութեան խնամիական վերաբերմունքը։

Ը. ՏՊԱԳՐՈՒԱԾ ՀԱՇՎԻ ՄԱՍԻՆ։ Նախկին հոգաբարձութիւնը մի գրքոյկով հրատարակել է իր եռամեայ գործունէութեան պատմութիւնն ու հաշիւը, որ սակայն ինչպէս ցոյց տուեց յանձնաժողովիս բազմակողմանի քննութիւնը, շատ կէտերում հակասում է իրականութեանն և շատ կէտերում գիտակցօրէն խեղաթիւրուած է ճշմարտութիւնն։ Այսպէս՝ 1) «Գրքոյկի երկրորդ երեսում ասուած է...» «աչքի առաջ ունենալով աւագի (աւագ-ուսուցչի) և ուսուցչական խմբի գժտութիւնները, միաձայն որոշուեց արձակել աւագ-ուսուցիչ պ. Խ. Դիլանեանցին»։ Մինչդեռ, ինչպէս երևում է հոգաբ. խորհրդի 1906 թ. յուլիսի 13-ի արձանագրութիւնից, Խ. Դիլանեանին հոգաբարձութիւնն հեռացրել է աւագ-ուսուցչի պաշտօնից, որովհետև «ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ աւագ-ուսուցիչ Խ. Դիլանեանցին և վարժուհի օր. Աստղիկ Մաճկալեանցին այլևս ուսումնարանների սուղ միջոցների պատճառով հնարաւորութիւն չըկայ պահելու իրանց պաշտօններում։» Հետևապէս երկուսից մէկը՝ կամ գրքոյկի մէջ գրը-

ւածն է սուտ, կամ արձանագրութեան մէջ յիշածը։

2) Գրքոյկի նոյն երեսում հոգաբարձութիւնն ասում է. «Ժողովրդի անգիտակից մասը սկսեց ապրիլել, անժամանակ հաշիւ պահանջել, որին իսկոյն հոգաբարձութիւնս ընդառաջ գնաց ու թէև տարին չէր վերջացել, բայց օգոստոսի սկզբին դրեց իր մանրամասն հաշիւները հրապարակական ժողովի առաջ... Ժողովուրդը տեսաւ, հասկացաւ, շնորհակալութիւն յայտնեց և ցրուեց»... Նախ՝ ժողովրդի իրեն ընտրած հասարակական պաշտօնեաներից հաշիւ պահանջելը, երբ և լինի այդ, ոչ մի դէպքում չի կարելի «անժամանակ» հաշուել։ Երկրորդ՝ եկեղ.-ծխական կանոնադրութեան 67 և 72 յօդ. համաձայն օգոստոսի սկզբներին, (թերևս աւելի վաղ) հոգաբարձութիւնն ինքնին պարտաւոր է ոչ միայն նախորդ ուսումնական տարւայ հաշիւը ներկայացնել ծխական ժողովին, կամ այդ ժողովի ընտրած վերատեսուչ յանձնաժողովի քննութեանն, այլ և պարտաւոր էր ներկայացնել ծխական ժողովի հաստատութեանն առաջիկայ ուսումնական տարւայ նախահաշիւը։ Սակայն ինչպէս երևում է հոգաբարձ. խորհրդի արձանագրութիւնից, ելևմտից հաշուեմատեաններից, գաւառիս Հայր Գործակալի տուած № 398 տեղեկութիւններից և յանձնաժողովիս կատարած քննութիւնից, հոգաբարձութիւնը ոչ միայն դպրոցների բացման առաջին տարին, այլ և իր եռամեայ գործունէութեան ընթացքում և ոչ մի անգամ ոչ հաշիւ և ոչ էլ նախահաշիւ է ներկայացրել ծխական ժողովին, կամ այդ ժողովից ընտրուած լիազօրներին։ Հետևապէս գրքոյկում հրատարակածը հաշուեւութեան մասին, միանգամայն չի համապատասխանում իրականութեանը։

3) Գրքոյկի երրորդ երեսում հոգաբարձութիւնը գրում է՝ «շինութիւնը փոքր լինելով՝ փակեց ծաղկոցը և մեծ օրիորդների համար բացած դասարանը»։ Մի կողմ թողնելով ծաղկոցի և հասակաւորների լրացուցիչ դասընթացի դաստիարակչական ու կրթական անհրաժեշտ նշանակութիւնը, յանձնաժողովիս քննութիւնն ինչպէս ցոյց տուեց, թէ ծաղկոցը և թէ հասակաւորների դասարանը իրենք գրեթէ ամբողջապէս հոգալիս են եղել իրենց ծախքը, հետևապէս սոսկ շինութեան փոքրութեան պատճառով ծաղկոցի և հասակաւորների լրացուցիչ դասարանի փակումն հոգաբարձութեան կողմից միանգամայն սխալ քայլ է։ Մանաւանդ, ինչպէս ցոյց են տալիս հոգաբարձական հաշիւները, դպրոցի բիւջէն, հակառակ հոգաբարձութեան անընդհատ գանգատների, գրեթէ ամեն տարի յաւելումն է ունեցել և ոչ դեֆիցիտ. օր. «վերջին 1907—8 ուս. թուին աւելացել է 478 ր. 30 կոպ.։

4) Նոյն գրքոյկի 3-երեսում հոգաբարձութիւնը գրում է. «1906—7 ուսումն. տարին մի խաղաղ, արդիւնաւէտ տարի, ուսուցիչներն իրենց կոչման բարձրութեան վրայ, ժրաջան, համերաշխ, աշխատող... երբ սեպտեմբերի 1-ին զանգը հնչեց... ուսումնարան լցուեցին մօտ 600 աշակերտ-աշակերտուհի...» Մինչդեռ նոյն հոգաբարձական խորհուրդն իր 1906 թ. օգոստոսի 18-ի, նիստում, աչքի առաջ ունենալով, որ ժողովուրդը յուզած է հոգաբարձական և ուսուցչական կազմի դէմ և «կարող են մեծ բարդութիւններ առաջ գալ, ժողովը միաձայն որոշեց՝ ուսումը յետաձգել մի առժամանակ» (1906 թ. 18 օգոստ. հոգաբ. արձան.) և ուսումնարանն, ինչպէս երևում է հոգաբ. ժողովի սեպտ. 12-ի, արձանա-

գրութիւնից բացել է սեպտ. 11-ին։ Հետևապէս տարին «խաղաղ» չէ եղել, «զանգը սեպտ. 1-ին չէ հնչել». ժողովուրդը դժգոհ է եղել դպրոցից ու նրա վարիչներից, որ արտայայտել է կանոնաւոր ծխական ժողովում կազմուած 193 ստորագրութեամբ բողոքագրով, որ ժողովը միաձայն արտայայտելով իր դժգոհութիւնը թէ հոգաբարձական և թէ ուսուցչական կազմի դէմ, որոշել է պահանջել յիշեալ արձանագրութեամբ հեռացնել՝ թէ հոգաբարձական և թէ ուսուցչական ամբողջ կազմը։ (1906 թ. 21 օգոստ. որ գաւառիս Հայր Գործակալի № 628 յայտարարութեամբ ուղարկուած է թեմական իշխանութեանն)։ Հետևապէս զրքոյկի այդ կէտը նոյնպէս բացարձակ սուտ է։

5) Նախկին հոգաբարձութիւնն իր հրատարակած զրքոյկում դպրոցի նոր շինութեան առթիւ հոգաբարձու պ. Վ. Շահպարոնեանցի ինչ որ ծրագիրը գովաբանելուց յետոյ, 4—5 երեսներում ասում է՝ «ուսումնարանների № 17 և 18 կրպակը նստող պ. Յ. Դիլանեանից, որ պէտք է հետևաբար յետ դնէր կրպակի քրէէից յընթացս վեց տարուան, դեռ այժմեան քրէեից էլ առելի պէտք է տար 15 %—3000 բուբլի»։ Մինչդեռ նոյն հոգաբարձութիւնն իր 1907 թ. դեկտ. 27-ի նիստում որոշել է «բանակցել ուսումնարանապատկան կրպակի վարձող Յ. Դիլանեանի հետ այն մասին, թէ արդեօք նա համաձայն չի՞ լինի նոր շինուելիք դպրոցի շինութեան ժամանակ օգնութեան հասնել հոգաբարձութեանն հետեւեալ պայմանով. որ նա տարի ու կիսան ընթացքում տայ հոգաբարձութեան 3000 բուբլի, հատուցանելով ամսէ ամիս և այդպիսի գումարը հանգցնի եօթ տարուայ ընթացքում, հաշուելով կրպակի վարձագին

և յիշեալ ժամանակամիջոցում հոգաբարձութիւնը պարտաւորուի վճարել 10 % այն աւելորդ փողի համար, որ յիշեալ ժամանակում պարբերաբար հանգցրած փողից դուրս կունենայ Յար. Դիլանեանը հոգաբարձութեան վրայ, և եթէ Յար. Դիլանեանը այս պայմաններին կը համաձայնի, նրա հետ կապել պայմանագիր» (տես հոգ. արձ. 27 դեկտ. 1907 թ.)։ Արդ հոգաբարձութեան հրատարակած զրքոյկի համաձայն, 3000 բուբլին հաշուելու է վեց տարուան քրէի, իսկ նոյն հոգաբարձութեան № 13 արձանագրութեան համաձայն. 3000 բուբլին հաշուուելու է եօթ տարուան քրէի, դեռ հոգաբարձութիւնն էլ պարտաւորուում է աւելացած փողին 10 % շահ վճարել։ Արձանագրութեան համաձայն, 3000 բուբլին հաշուելով եօթ տարուան քրէի, տարեկան անում է 428 ր. 57 կոպ. այնինչ պայմանագրի համաձայն նոյն կրպակները տրուած են Դիլանեանցին տարեկան 480 բուբլով։ Հետևապէս հոգաբարձութեան զրքոյկով յայտարարածը, թէ՝ «այժմեան քրէէից էլ աւելի պէտք է տար 15 %», բացարձակ սուտ է և Դիլանեան ոչ թէ աւելի, այլ տարեկան 52 բուբլի էլ այժմեան քրէէից պակաս պիտի վճարէր, որ եօթ տարուան անում է 364 ր. և բացի այդ, դեռ հոգաբարձութիւնից էլ 10 % շահ պիտի ստանար իր տուած փողի համար։ Հետևապէս Յար. Դիլանեան ոչ միայն. «օգնութեան հասած» չէր լինի դպրոցներին, այլ ինքն օգտուած կը լինէր դպրոցներից։ Եւ զարմանալի է, թէ ինչո՞ւ հոգաբարձութիւնն ինքն իրեն արձանագրութեանն հակասող տեղեկութիւններ է հրատարակում ու տարածում ժողովրդի մէջ. տեղեկութիւններ, որ միանգամայն զուրկ են ճշմարտութիւնից։

6) Հոգաբարձութիւնն յիշեալ գրքոյկում անընդհատ գանգատւում է դպրոցների նիւթական միջոցների մասին. օր. «գրքոյկի հէնց առաջին երեսում ասում է հոգաբարձութիւնը. «ուսումնարանն էլ իսկական մուտք միմիայն 3000 ռուբլի ունէր, բայց մենք հաւատ ունենալով մեր ուժերի և ժողովրդեան վրայ. առանց դեֆիցիտի փակեցինք տարեայ հաշիւը... դպրոցները խարխուլ, կիսաքանդ ու աւեր, առանց պարագաների, մօտ 500 բուբլի պարտք և ոչ մի կոպէկ...» Որ տեղւոյս դպրոցների շէնքը հին ու խարխուլ է եղել, դա փաստ է, որովհետև դպրոցական շէնքն այժմ էլ նոյն դրութեանն է և նախկին հոգաբարձութիւնն իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում այդ առթիւ ոչինչ չէ արել, բացի իր գանձապահի ներկայացրած ինչ որ ծրագիր-նախագիծը լսելուց ու գովաբանելուց։ Բայց որ հոգաբարձութիւնն յայտարարում է, թէ «ուսումնարանն էլ իսկական մուտք միմիայն 3000 ռուբլի ունէր...» դա միանգամայն հակասում է իրականութեանն, և ոչ միայն իրականութեանն, այլ և հոգաբարձութեան իր սեփական որոշումին։ Այսպէս հոգաբարձութիւնն իր 1905 թ. հոկտ. 12-ի նիստում նախահաշիւ կազմելիս, նախատեսել է «տարեկան մուտք մօտաւորապէս հետևալ կերպով.—

Աշակերտներից ուսման վճար . .	2000 բուբ.
Կրպակներից արենտի վճար . . .	2000 »
Ախալցխայի եկեղ. կալւածներից .	1000 »
Յովհաննեանից	150 »
Բուռնաշէթի աւետարանից . . .	150 »
Մոմավաճառութիւնից	150 »

Ինչպէս պարզ երևում է՝ այս բոլորը, որ անում է 5800 բուբլի. դրեթէ երկու անգամ աւելի հոգաբարձութեան յայտարարածից, դպրոցական եկամուտի մշտական և իսկական աղբիւրներն են և դրեթէ ծածկում են դպրոցների տարեկան ծախքը, որ ըստ նոյն նախահաշուի հոգաբարձութիւնը որոշել է 5980 բուբլի (պակասում է միայն և միմիայն 180 բ.) և ինչպէս երևում է հոգաբարձութեան նոյն թուի հաշուից, դպրոցը մուտք ունեցել է նախատեսուածից էլ աւելի, այն է՝

Աշակերտներից ուսման վճար նախատեսուած 2000-ի փոխարէն ստացել է . . .	2206 բ. 50 կ.
Բուռնաշէթի աւետարանից . . .	150-ի
փոխարէն	160 բ.
Կրպակներից	2000-ի
փոխարէն	2057 բ. 92 կ.

Որի շնորհիւ հէնց նոյն իսկ դպրոցների բացման առաջին տարին. երբ, ինչպէս գանգատւում է հոգաբարձութիւնը՝ «դպրոցները խարխուլ... մօտ 500 բ. պարտք և ոչ մի կոպէկ...», այնուամենայնիւ ոչ միայն դեֆիցիտ չեն ունեցել, այլ և մի փոքրիկ գումար էլ աւելացել է։ Անհասկանալի է դարձեալ, թէ այս բոլորից յետոյ, ի՞նչն է առիթ տուել հոգաբարձութեան իրական փաստերն յեղաշրջելու և սուտ տեղեկութիւններով ինքն իրեն գովաբանելու։

7) Մի այլ տեղ նոյն գրքոյկի 5-երեսում հոգաբարձութիւնն ինքնագով ոճով պարծենում է՝ «եթէ մեր հարևան քաղաքներում ուսուցիչներն ստանում էին դասագին 25—30 բուբլի, մեզ մօտ ամենաօրինակելի ուսուցչական խումբն ստանում էր 15 - 20 բուբլի, եթէ ուրիշ տեղ 600 աշակերտի համար ծախսում էին տասնեակ հազարներ, մենք ծախսել ենք մօտ 6000 բուբլի, դա էլ ձեռք էր բերւում ոչ թէ ուղղակի ուսումնարանի եկամուտներից, այլ դրա

կէսը՝ մօտ 3000 ռուբլին հոգաբարձութեանս ջանքերով, երեկոյթներ տալով, ներկայացումներ կազմակերպելով, Աւետիս ման գալով, մուրալով և ուրիշ հազար ու մի տեսակ միջոցների դիմելով.» թէ բացի յիշածներից ուրիշ ինչ «միջոցների» է դիմել հոգաբարձութիւնն, յանձնաժողովս անկարող եղաւ որոշել, սակայն, նախ՝ ուսուցիչների վարձը կտրելով, 15 – 20 ռուբլի դասագին տալն, «ամենաօրինակելի ուսուցչական խմբին», եթէ յիրաւի օրինակելի է եղել այդ խումբը. պարծանքի նիւթ չը պիտի կազմէր հոգաբարձութեան համար։ Երկրորդ՝ ինչ վերաբերում է այն կէտին, որ իբր թէ դպրոցական ծախքի կէսը «մօտ 3000 ռուբլին» հոգաբարձութիւնը ձեռք է բերել իր «ջանքերով» «Աւետիս ման գալով, երեկոյթներ տալով, մուրալով... «և այլն, միանգամայն հակասում է իրականութեանը, որովհետև նոյն զրքոյկում հոգաբարձութեան տուած հաշուից երևում է, որ 1905-6 ուս. տարում հոգաբարձութիւնը մուտք է ունեցել՝

Աւետիս ման գալուց . . .	332 ռուբլի,
Նուէրներ	137 ր. 35 կ.
Երկու անգամ վիճակախաղից .	471 ր. 55 կ.
Ներկայացումներից	282 ր. 64 կ.
Ընդամենը .	1223 ր. 36 կ.,

որից դուրս գալով վիճակախաղի համար պատրաստուած ձեռագործի նիւթերի ծախքը . 155 ր. 25 կ. մնում է՝ 1068 ր. 11 կոպ., որ հոգաբարձութեան յայտարարած 3000 ռուբլու զրէթէ $^1/_3$ է կազմում միայն.

1906—7 ուս. տար. հոգաբարձութիւնը մուտք է ունեցել՝

Աւետիս ման գալուց .	326 ր. 10 կ.
Նուէրներից	175 ր. —

Ներկայացումներից	218 ր. 19 կ.
Վիճակախաղից	254 ր. 31 կ.
Ընդամենը .	973 ր. 60 կ.,

որից դուրս գալով վիճակախաղի համար պատրաստուած ձեռագործի նիւթերի գինը՝ 280 ր. 59 կոպ., մնում է 693 ր. 1 կոպ., որ հոգաբարձութեան յայտարարած 3000 ռուբլու քառորդից էլ պակաս է։

1907 – 8 ուս. տար. հոգաբարձութիւնը մուտք է ունեցել՝ Աւետիս ման գալուց . . 326 ր. 10 կ. (զարմանալի զուգադիպութիւն նախորդ տարւայ հետ)։

Երեկոյթից	89 ր. 73 կ.
Նուէրներից	40 ր. — »
Վիճակախաղից	276 ր. 50 կ.
Ընդամենը .	732 ր. 33 կ.,

որից դուրս գալով ձեռագործի նիւթերի գինը՝ 279 ր. 17 կոպ. մնում է 453 ռուբլի 16 կոպ., որ 3000 ռուբլի լինելուց շատ ու շատ հեռու է...

Զարմանալի է դարձեալ, թէ ինչո՞ւ հոգաբարձութիւնը մաթեմատիքական պարզ թուերն իսկ յեղաշրջել է այսքան՝ 453 ռուբլին դարձրել 3000 ռուբ. հրատարակել իբրև զուտ ճշմարտութիւն։

8) Նոյն զրքոյկի 3-երեսում գրում է հոգաբարձութիւնը՝ «ուսուցիչները իրենց կոչման բարձրութեան վրայ, ժրաջան, համերաշխ, աշխատող. նրանք բացի իրենց դասերից՝ ամեն շաբաթ ունենում էին մանկավարժական ժողով, փորձնական դաս, գրական երեկոյթ և ժողովրդական հանրամատչելի դասախօսութիւններ...»։ 5-երորդ երեսում հոգաբարձութիւնն այդ ուսուցչական խումբն անուանում է

«ամենաօրինակելի» խումբ։ Յանձնաժողովս հնարաւորութիւն չունենալով անձամբ-անձին փաստացի քննութեան ենթարկելու այդ «ամենաօրինակելի» ուսուցչական խմբի եռամեայ մանկավարժական գործունէութիւնն, առաջ է բերում միայն 1905-6 ուս. տարւայ աւագ-ուսուցիչ պ. Խ. Դիլանեանի և 1907-8 ուս. տարում նոյն խմբի մէջ ծառայող ուսուցիչ պ. Լևոն Բունիաթեանի յանձնաժողովիս տուած զեկուցումներից հատուածներ՝ այդ «ամենաօրինակելի ուսուցչական խմբի» մասին։ Աւագ-ուսուցիչ Խ. Դիլանեանը իմիջի այլոց գրում է. «այդպիսի պատրաստութիւն և պարտաճանաչութիւն ունեցող մարդկանց ձեռքն յանձնել ուսումնարանի ղեկը, նշանակում է անաէրութեան մատնել. խաղալ 600 մանուկների կրթութեան հետ և 6-7 հազար ռուբլի ժողովրդական արդիւնքներով ստեղծած գումարը ջուրը լցնել...

Ուսուցիչ պ. Լևոն Բունիաթեան այդ «ամենաօրինակելի ուսուցչական խմբի» և ուսումնարանի մասին ընդհանրապէս ի միջի այլոց գրում է՝

1) Մանկավարժական խորհուրդը ուսման ոչ մի ծրագիր չունէր, իւրաքանչիւր ուսուցիչ առաջնորդւում էր իր խելքի կարածի պէս...»։

2) Ուսումնական մասն անկարգ էր տարւում, ոչ մի վերահսկողութիւն մանկաավրժական խորհրդի, աւագի, կամ հոգաբարձութեան կողմից չը կար ու չը կար...»։

3) «Բուն մանկավարժական կամ դիդաքտիքական հարցեր բոլորովին չէին արծարծւում ժողովներում...»

4) «Փորձնական դասեր բոլորովին տեղի չունեցան...»։

5) Աշակերտներն առանց հասկանալու անգիր էին անում...»։

6 «Հոգաբարձուների վերաբերմունքը դէպի ուսումնարաններն առհասարակ լաւ էր, երևի նրա համար, որ սրանց հետ մեծ մասամբ խնամական կապերով էին միացած...»։

7) «Լեզուի ուսուցիչ լինելով հանդերձ, հասարակ ուղղագրութիւն չը գիտէին, այդպիսի սխալներ շատ կային արձանագրութիւնների մէջ. օրինակ. գրադարանապետ, արեւնազան, թէք, նայ, դէպք գիտութիւն...»։

8) «Կային այնպիսի ուսուցիչներ, որոնք պահանջող ցենզը չունէին»։

9) «Ուսուցիչների յարաբերութիւնները միմեանց հետ առերեսոյթ լաւ էին, բայց ներքուստ իրարից զգոն էին...»։

10) «Ուսուցիչները շնորհիւ իրենց կարճամտութեան կամ եսամոլութեան, միշտ իրար չեզոքացնում էին և չէին նկատում իրանց վարմունքի չափազանց վնասակարութիւնը։ Պատճառներից մէկն էլ ուսուցիչների այդ անհամերաշխութիւնն ու անբարեխղճութիւնն էր, որ տղայքը հեռզհեռէ աւելի ու աւելի լքրացան ու փողոցային դարձան...»

11) «Աշակերտների վարք ու բարքը շատ վատ էր, դպրոցը դարձել էր մի որջ. ախտածին բոյն, բայց բացակայում էր ախտահանող բարի բժիշկը։ Զը նայելով, որ առաջարկողներ կային, որ անուղղաներին արձակեն դպրոցից, որ շնորհիւ անհամերաշխութեան, ոչ մի հետեւանքի չէին հասնում. վնասած էր հասարակութեանը դուռ գալու համար՝ յարձակել ոչ մեկին...»

12) «Աշակերտներն ընդհանրապէս արհամարհանքով էին վերաբերւում դէպի ուսուցիչները... հայ-

հոյանքի դէպքեր են եղել (նոյնիսկ վարժուհուն), սպառնալիք եայլն...»։

13) «Հասարակութեան վերաբերմունքը դէպի դպրոցը մեծ մասամբ պաղ և մինչև իսկ թշնամական էր դէպի ուսումնարանի վարչութիւնը...։

Տարեայ սկզբին կամ վերջը շատ ծնողներ եւ էին վերցնում իրանց երեխաներին և քաքաքային դպրոցը տեղաւորում...։

Առաջ բերելով վերոգրեալ փաստերը, եզրակացութիւն կազմելն այդ «ամենաօրինակելի ուսուցչական խմբի» մասին, թողնում է յանձնաժողովս ծխական ժողովին։ Իսկ իր կողմից առաջ է բերում միայն այդ «ամենաօրինակելի» ուսուցիչներից մէկի պաշտօնական մի գրութիւնից կտորներ, պահպանելով նրանց ուղղագրութիւնը։ «Ախալքալաքի երկսեռ երկդասեան դպրոցի Մեծապատիւ՝ պարոն հոգաբարձութեան նախագահին»... յետոյ՝ շարունակութիւնը՝ «նմանապէս խնդրումեմ այս տարեայ ամառուայ ուռճիկս էլ միանուագ, մինչև ամսիս վերջը ինձ վերադարձնել»։

Եւ այս բոլորից յետոյ հոգաբարձութեան հրատարակած լիշեալ գրքոյկը, որ «երկու խօսք Ախալքալաքայ հայ հասարակութեան» վերնագիրն է կրում ու հոգաբարձութեան եռամեայ պաշտօնավարութեան պատկերն է ներկայացնում, լի է անհիմն ,անպատշաճ ու վարկաբեկ դարձուածներով մանաւոր անհատների հասցէին, անվայել պոլիտիկայով ու անվերջ ինքնագովութեամբ, յանձնաժողովս զանց է առնում քննել այդ տգեղ վարմունքը, միանգամայն անպատշաճ համարելով այն՝ իւրաքանչիւր հասարակական հիմնարկութեան համար, մանաւանդ մի հոգաբարձական կազմի համար, որ համարւում է ժողովրդի ընտրեալ ներկայացուցիչը։

Թ. ԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ։ Եւ այսպէս Ախալքալաքի Հայոց եկեղ.-ծխական ընդհանուր ժողովի յանձնաբարութեամբ, նոյն ժողովից ընտրուած վերաստուգիչ յանձնաժողովս, մեծ դժուարութեամբ նախկին հոգաբարձութեան գանձապահ պ. Վ. Շահպարոնեանից ստանալով հոգաբարձութեան հաշիւներն ու փաստաթղթերն, (որոնց մի մասը մինչև օրս էլ չը կարողացաւ ստանալ յանձնաժողովս, չընայելով քանիցս պաշտօնական դիմումներին), լրագրական յայտարարութեամբ տեղեակ ու մեր դպրոցական խնդրի հետ առնչութիւն ունեցող անձնաւորութիւններից տեղեկութիւններ հաւաքելով, սոյն 1909 թ. յունվարի 13-ից մինչև յուլիսի 17-ը մի շարք պարբերական ժողովներում քննութեան ենթարկելով ձեռքի տակ եղած նիւթերը, նախկին հոգաբարձութեան 1905-8 տարեայ եռամեայ գործունէութեան մասին, եկաւ հետևեալ եզրակացութեան.

1) Նախկին հոգաբարձութիւնն իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում հաշիւ չէ տուել և ոչ մի անգամ, ոչ ծխական ընդհանուր ժողովին և ոչ այդ ժողովից լիազօրուած որևէ մարմնի։

2) Նախկին հոգաբարձութիւնն իր եռամեայ գործավարութեան ընթացքում և ոչ մի անգամ չի քննել ու ստուգել իր գանձապահի հաշիւները։

3) Հոգաբարձութիւնն իր եռամեայ գործունէութեան ընթացքում և ոչ մի տարի չէ ներկայացրել նախահաշիւ ծխական ժողովին իհաստատութիւն և 21041 ր. 65 կ. Ախալքալաքի համար մի խոշոր հասարակական գումար, ստացել ու ծախսել է ըստ իր հայեցողութեան։

4) Հոգաբարձութեան հաշուեմատեաններից (բացի 1905-6 ուս. տար. եկամտից մատեանը), և ոչ

մէկը՝ չէ ժապաւինած նոյն իսկ դպրոցական կնքով։

5) Հաշուեմատեանները կազմուած են շատ անփոյթ ու անկանոն, լի ջնջումներով ու յաւելումներով, որոնց մասին ոչ առանձին մակագրութիւն կամ բացատրութիւն կայ և ոչ էլ հոգաբ. խորհրդի արձանագրութիւն։

6) Հոգաբարձութեան գանձապահը դպրոցական ծախքերի մեծ մասն արել է ինքնակամ, առանց հոգաբ. խորհրդի որոշման։

7) Հոգաբարձութեան գանձապահը ծախքեր է արել հակառակ հոգաբարձական խորհրդի որոշման։

8) Հոգաբարձութիւնն իրեն խնամքին յանձնուած եկեղեց. դպրոցական կալք ու գոյքի համար ոչ միայն ժապաւինեալ կանոնաւոր մատեան չունի, այլ չունի նոյն իսկ մի հասարակ ցուցակ, որով հնարաւոր լինէր ստուգել դպրոցների ունեցած չունեցածը։

9) Հոգաբարձութեան անփութութեան ու անպարտաճանաչութեան շնորհիւ՝ դպրոցական շարժական գոյքից շատերը կորել, շատերը փչացել, շատերն էլ գտնուում են մասնաւոր մարդոց մօտ, որոնք կամ արդէն սեփականել են կամ անվճար օգտուում են տարիներ շարունակ, իսկ այդ իրերի կարկատանը կատարուում է դպրոցների հաշուով։

10) Նախկին հոգաբարձութիւնը մի ամբողջ տարի է ինչ հեռացել է պաշտօնից, բայց մինչ ցարդ ոչ դպրոցական գոյքը, և ոչ էլ հաշիւներն է յանձնել հոգաբարձական նոր կազմին, չը նայելով վերջինիս քանիցս պաշտօնական դիմումներին։

11) Եկեղեցապատկան կրպակների շահագործումը, որ դպրոցական ամենագլխաւոր մուտքերից մէկն է կազմում, վարել է հոգաբարձութեան գանձապահն ինքնագլուխ, առանց հոգաբարձական խորհրդի որոշման և չափազանց անկանոն ու անփոյթ։

12) Կրպակները քրէհողներից ոմանք, ինչպէս գրում է գանձապահն հաշուեմատեանում իր ձեռքով, պարտ են մնում դպրոցներին (Տիգրան Անախասեան և Նապարէթ Աստուածատրեան) մուրհակով որոշ գումարներ։ Բայց այժմ գանձապահն հրապարակ չի հանում այդ մուրհակներն, առարկելով, թէ չէ ստացել այդպիսի մուրհակներ պարտապաններից։

13) Կրպակներից մէկի պայմանագրի և հաշուեմատեանի մէջ նոյն կրպակի վերաբերմամբ հոգաբարձութեան գանձապահը կատարել է ակնյայտնի կեղծում, փոփոխելով պայմանաժամը յօգուտ քրէհողի։

14) Նախկին հոգաբարձութիւնն իր պաշտօնավարութեան ընթացքում կատարուած ծախքերից միմասի համար՝ չունի ոչ մի փաստաթուղթ, եղած փաստաթղթերից շատերն ապօրինի են, որովհետև ուրիշի տեղ ստորագրել են կամ հոգաբարձուներից կամ դպրոցի ուսուցիչներից, կամ ծառաներից մէկը։ Կան նոյն իսկ փաստաթղթեր, որոնց տակն, իբրև հաստատութիւն, ստորագրել է ինքը գանձապահը՝ «վճարեցի կամ ստացայ գանձապահ Վ. Շահպարոնեան»։

15) Օգոստոսի 4-ին (1908 թ.) հաստատել է հոգաբարձական նոր կազմն և անմիջապէս ընտրել է նոր գանձապահ, բայց նախկին գանձապահ պ. Վ. Շահպարոնեան առանց հոգաբաձ. նոր կազմի լիազօրութեան, նոյն իսկ հակառակ հոգաբարձութեան, քանիցս պահանջներին, օգոստոսի 4-ից մինչև հոկտ. 10-ը ինքնակամ ծախսել է ըստ իր հայեցողութեան 2532 ր. 39 կոպ. դպրոցական փողերից։

16) Նախկին հոգաբարձութիւնն ուսուցիչներին ռոճիկներ որոշելիս ղեկավարուել է խնամիական սկզբունքներով, այսպէս՝ գանձապահի փեսայ ու-

սուցիչ Յակ. Տօնականեան ստացել է 25 ր. դասագին (22 դասի համար 550 ռ. տարեկան) մինչդեռ նոյն կրթական ցենզն ունեցող ուրիշ ուսուցիչներ՝ Աբ. Տէր-Յակովբեան, Լևոն Բունիաթեան ստացել են 13 ր. դասագին (22 դասի համար 300 ռուբլի տարեկան)....։

17) Նախկին հոգաբարձութիւնն իր հրատարակած զրքոյկի մէջ շատ կէտերում գիտակցօրէն լեղաշրջում է ճշմարտութիւնը, միանգամայն սուտ ու սիալ տեղեկութիւններ է տարածում ժողովրդի մէջ ու անտանարկում է մասնաւոր անհատների, անվերջ զոլաբանելով ինքն իրան։

Սրանով յանձնաժողովս վերջացնելով իր վերատեսուցումն, որոշեց՝ 1) յանձնաժողովիս քննութեան արդիւնքը տպագրելով բաժանել ժողովրդին մանրամասն ծանօթանալու համար, 2) Տպագրութեան ծախքը խնդրել ներկայ ծխական. հոգաբարձութիւնից, 3) Սոյն քննութեանը վերաբերեալ բոլոր զրագրութիւնները, յանձնաժողովիս արձանագրութիւնները, նախկին հոգաբարձութեան բոլոր հաշուեմատեանները ու փաստաթղթերը յանձնել գաւառիս Հայոց Գործակալին ներկայացնելու ծխական ընդհանուր ժողովին խնօրինութիւն։

Նախագահ վերատես. յանձնաժող. Վ. Մանուկեանց

Անդամներ վերատեսուչներ յանձնաժող.
Յովհաննէս Մաքաշեանց
Վարդգէս Քաջազնունի.
Խաչատուր Մաքաշեանց
Սարգիս Գասպանջեանց.

Քարտուղար Լ. Տեղ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека ZUUՈ-ԱՐՄ.ՍՕՐ

Apm
3-27

ՀՀ Ազգային գրադարան
NL0231564

50.276